

# **ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ**

**ՍԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ**

**ԻՆՍԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ**

**2010-2015թթ.**

## **Մուտք**

Վաճառորի Յովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի 40-ամյա բուն առաքելությունը ՀՀ հյուսիսային տարածաշրջանը (նաև հարակից շրջաններին և մերձավոր սփյուռքին) մանկավարժական բարձրորակ մասնագետներով ապահովելն է:

Կրթական եվրոպական տարածքին ինտեգրվելը նոր խնդիրներ, մոտեցումներ է առաջադրել: Վերջին տարիներին բուհի գործունեությունը նպատակառուղղված է Բոլոնիայի հռչակագորի դրույթների ոգուց բխող գործունեության ծավալմանը:

Լուրջ տեղաշարժեր են կատարվել ուսուցման նոր համակարգերի, տեխնոլոգիաների, մասնագիտությունների, կրթոփական, գիտելիքի գնահատման համակարգերի ներդրման ուղղությամբ:

Այսօր բուհում ուսուցումն իրականացվում է բակալավրի հիմնական 30 և մագիստրոսի հիմնական 10 կրթական ծրագրերով՝ ավելի քան 5000 ուսանող:

2010թ. բուհը դիպլոմավորված մասնագետի 16 հիմնական կրթական ծրագրերով կտա վերջին շրջանավարտը (հեռակա ուսուցման համակարգ):

Բուհում ուսուցումը կազմակերպվում է հինգ ֆակուլտետների միջոցով՝ բանասիրական, պատմաաշխարհագրական, մանկավարժության, ֆիզմաթ, կենսաբանաբիոմիական (ուսուցման առկա և հեռակա համակարգ):

Բուհում դասավանդում են շուրջ 300 դասախոսներ, որոնց 50,5%-ը գիտական աստիճան և/կամ կոչում ունի: Որոշակի քայլեր են կատարվել կրթության շարունակականության ուղղությամբ:

Բուհն ունի հենակետային վարժարան՝ հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերով, կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ: 2006թ. ներդրվել է կրթական եռաստիճան համակարգ, այլ կերպ ասած՝ մինչքուհական, բուհական և հետքուհական կրթություն:

**ՎՊՄԻ-ի գարգացման ռազմավարության առաջնային խնդիրներն են.**

1. ՀՀ շահերին ու հետաքրքրություններին ծառայելը,
2. Երկրի մտավոր ներուժի գարգացմանը նպաստելը՝ ժամանակի պահանջները բավարարող, ապագա հետազոտողի ունակություններով օժտված կադրերի պատրաստման ճանապարհով,
3. հասարակության կառավարող ներուժի համալրումը,
4. մանկավարժական բուհի գարգացման մոդելի ստեղծումը,
5. մանկավարժական գործընթացների կատարելագործումը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների ներդրման ճանապարհով,

6. փոփոխվող միջավայրում գործատուների պահանջները բավարարող բարձրորակ մասնագետների պատրաստմանը նպաստող համակարգի ստեղծումը,
7. տարածաշրջանի մանկավարժական կադրերի վերաորակավորումը և որակավորման բարձրացումը,
8. մանկավարժության տեսական և դիդակտիկական խնդիրների ուսումնասիրումը,
9. շարունակական կրթության ապահովումը,
10. գիտահետազոտական աշխատանքների ակտիվացումը,
11. գիտության՝ ակադեմիական համակարգին ինտեգրումը,
12. համակողմանի զարգացած անհատի ձևավորումը,
13. ինստիտուտի մուտքի ընդլայնումը, ուսանողական համակազմի կայուն զարգացումը,
14. նյութատեխնիկական բազայի բարելավումը,
15. ֆինանսատնտեսական գործունեության կատարելագործումը:

### **ՎՊՄԻ-ի առաքելությունը**

ՎՊՄԻ-ն արդեն 40 տարի ՀՀ-ի հյուսիսային տարածաշրջանի ամենախոշոր հաստատությունն է: Տարածաշրջանի մանկավարժական ներուժի ----%-ն այսօր բուհի շրջանավարտներն են, Լոռու տարածաշրջանի հանրակրթական հաստատությունների ղեկավար մարմինների -----%-ը համալրված են բուհի շրջանավարտներով:

Ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ուսուցման համակարգերով, հեռակայող ուսանողության -----%-ը գյուղական վայրերի ուսուցիչներ են, վերջիններիս մեջ տեղ են գրավում նաև վերաորակավորվողները:

ՎՊՄԻ-ն զգալի ներդրում ունի գիտության զարգացման մեջ: 40 տարիների ընթացքում բուհի աշխատակիցների -----%-ը ձեռք է բերել գիտությունների թեկնածուի, -----ը՝ դոկտորի աստիճան, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ: Շրջանավարտների մի մասն էլ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտներուն կամ բուհերում:

ՎՊՄԻ-ն անմասն չէ նաև հանրապետության օրենսդիր, կառավարչական մարմինների գործունեությունից:

Կրթական գործունեության մեջ բուհն իր առաքելությունն է համարում.

- հայ մանկավարժական բազմամյա մշակույթի ավանդույթների պահպանում, զարգացումը և փոխանցումը,
- հանրապետությանը մանկավարժական որակյալ կադրերով ապահովումը,
- կրթության համակարգում բարեփոխումների իրականացումը,

- հիմնական կրթական ծրագրերի որակի բարձրացումը, որանց համարելիությունը Եվրոպական չափանիշներին,
  - շուկայի պահանջարկի կանխատեսմամբ մասնագետների վերառակավորման և լրացուցիչ կրթության կազմակերպումը,
  - կրթության որակի բարձրացման ապահովումը,
  - որակի ապահովման և վերահսկման համակարգի զարգացումը,
  - միջմշակութային գործունեության ծավալումը,
  - Բոլոնիայի սկզբունքների կյանքի կոչումը,
  - ժամանակակից կրթության շուկայի պահանջները բավարարող մրցունակ մասնագետների թողարկումը,
  - կրթության շարունակականության ապահովումը:
- Առաքելության նպատակների կենսագործման համար գերակա են համարվում հետևյալ խնդիրները.
- բարձրագույն կրթության մատչելիության ապահովումը,
  - սովորողների համար հավասար, մրցակցային ազատ պայմանների ապահովումը,
  - գիտելիքի արժեքայնության իրական չափումների ստեղծումը,
  - մանկավարժական կրթության աշխատողների գործիմացության բարձրացումը:

### **Ռազմավարական պլանի կառուցվածքը**

ՎՊՄԻ-ի զարգացման ռազմավարական պլանը ներառում է գործունեության հետևյալ ոլորտները.

1. Կառավարման
2. Կրթական
3. Գիտահետազոտական
4. Միջազգային
5. Ֆինանսատնտեսական
6. Սոցիալական

### **Կառավարում**

#### **Խնդիր 1. Կառավարման համակարգի կատարելագործում**

Ռազմավարական ուղղությունները.

- կատարել կառավարման համակարգի համակողմանի վերլուծություն, գնահատել համարժեքությունը բուհի ռազմավարական խնդիրներին,

- մշակել և ներդնել բուհի ղեկավարման նորարարական մոդել՝ հաստատուն գարգացման հեռանկարով, նպատակառուղղված կառավարման համակարգի նախագծային և բազմափուլային տիպի գարգացմանը,
- օպտիմալացնել տարբեր մակարդակների ղեկավարմանը ձեռնահասությունը, հստակեցնել գործառույթները, իրավասությունները, բարձրացնել պատասխանատվությունը՝ դրանք համահունչ դարձնելով հաստատուն գարգացման խնդրին,
- կառավարման միջոցների համակարգի գարգացումը նպատակառուղել աշխատակիցների և սովորողների մասնագիտական գործունեության և սոցիալական պայմանների բարելավմանը,
- բարձրացնել **կառավարման** համակարգի աշխատանքի արդյունավետությունը,
- ստեղծել **կառավարման** համակարգի աշխատողների ներուժի գնահատման համակարգ՝ նպատակառուղելով ապագա վարչարարմերի ռեզերվի ստեղծմանը,
- կատարելագործել կառավարչական գործունեության նորմատիվային-իրավական դաշտը,
- գործունեության բոլոր ոլորտների գարգացման նպատակով բարձրացնել բուհի դրական կերպարը,
- բարելավել կառավարման համակարգի տեղեկատվական ապահովումը՝ ընդլայնելով համակարգի կիրառումը բոլոր բնագավառներում,
- ընդլայնել ուսանողների մասնակցությունը՝ ինստիտուտի կառավարման գործընթացներում,
- մեծացնել ուսանողական խորհրդի դերը Բոլոնիայի գործընթացի հետ կապված կառուցվածքային, ծրագրային և կազմակերպական փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացում:
- **Իրականացնել կրթական գործընթացի պահանջորման և կազմակերպման ինստիտուտում գործող կառուցվածքի վերակազմավորում՝ Բոլոնիայի գործընթացի և կրետիտային համակարգի պահանջմերին համապատասխան,**
- **ստեղծել սույն ռազմավարության և ինստիտուտի գարգացման կառավարման գործընթացը համակարգող համապատասխան կարույց:**

## 2. Կրթության ոլորտ

Համաձայն իր առաքելության, ՎՊՄԻ-ն շարունակում է Լոռու մարզի և ՀՀ հյուսիսային շրջանների հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների և ժողովների նորոշ ճյուղերի համար մասնագետների պատրաստումը՝ անընդհատ

իրականացնելով արտաքին միջավայրային վերլուծություն՝ բարձրագույն կրթության շուկայում առկա միտումների բացահայտման, համակազմի զարգացման գերակա ուղղությունների, ինստիտուտի մրցակցային առավելությունների և ներքին հնարավորությունների հաշվառմամբ:

Դաշվի առնելով արտաքին մոնիթորինգի արդյունքները՝ նախատեսվում է սկսել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների և ինտեգրված ծրագրերի ելքային կոմպետենցիաների վրա հիմնված բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթաց՝ այն կողմնորոշելով դեպի ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ստեղծմանը:

### **Խնդիրները.**

#### **Խնդիր 1. Բարձրագույն կրթության մատչելիության ապահովում և ուսանողական**

##### **համակազմի համալրում**

Ուսուցման համարական ուղղությունները (գործիքները).

- հանրակրթության, հատկապես ավագ դպրոցի հետ կապերի ամրապնդում,
- դպրոցականների համար ստեղծագործական մրցույթների, առարկայական օլիմպիադաների անցկացում,
- հենակետային դպրոցների և կրթական կենտրոնների ցանցի ընդլայնում,
- աշակերտների համար անհատույց դասընթացների կազմակերպում (միասնական և ներբուհական քննական առարկաներ),
- աշակերտների հետազոտական աշխատանքների զարգացում,
- մարզային կառույցների հետ համագործակցությամբ նպատակային ընդունելության դրվածքի կատարելագործում,
- տարածաշրջանի ուսուցիչների համար խորհրդատվության կազմակերպում:
- պլանավորել հեռավար և դրսեկության ձևերով ուսուցման ընդունելություն՝ օգտագործելով նոր տեխնոլոգիաների և համակարգչային ուսուցման հնարավորությունները:
- զարգացնել համագործակցությունը այլ բուհերի հետ՝ միջնասնագիտական ասպարեզներում համատեղ կրթական ծրագրերի իրականացման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:
- ուսումնասիրել մոտակա սփյուռքի տարբեր մասնագիտությունների գծով մանկավարժական կադրերի պահանջարկը և հնարավորության սահմաններում աջակցել նրանց ուսուցման ու վերապատրաստման կազմակերպմանը պայմանագրային սկզբունքով:

- ստեղծել մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման և կառավարման կենտրոն՝ ներգրավելով նաև բուհի ուսանողներին:
- Ընդլայնել դիմորդների ընդունելությունը կրթական նոր ծրագրերի, տեխնոլոգիաների ներդրման, ընդլայնման և հեռանկարային նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ներմուծման միջոցով:

## **Խնդիր 2. Շարունակական կրթության ապահովում**

**Ուսուցչական ուղղությունները.**

- Բոլոր մասնագիտությունների գծով որակյալ դիմորդներով ֆակուլտետները համալրելու նպատակով հենակետային վարժարամի գործունեության ընդլայնում և բազմազանեցում,
- **միջին մասնագիտական կրթական ստորաբաժանման ստեղծում,**
- Լոռու մարզի և ՀՀ հյուսիսային շրջանների հանրակրթական դպրոցների ուսուցիչների և նախադպրոցական հիմնարկների մանկավարժների վերապատրաստման և **վերաորակավորման** դասընթացների կազմակերպում,
- **լրացուցիչ կրթության իրականացում,**
- **ոչ ֆորմալ կրթության կազմակերպում,**
- **կարճաժամկետ կրթական ծրագրերի իրականացում:**

## **Խնդիր 3. Նամադրելի հիմնական կրթական ծրագրերի ստեղծում և իրականացում**

**Ուսուցչական ուղղությունները.**

- հիմք ընդունելով Բոլոնիայի գործընթացի որույթները՝ մշակել նոր կրթական ծրագրեր և վերանայել առկա ծրագրերը, դրանք համապատասխանեցնել ուսուցման եռաստիճան համակարգին՝ ապահովելով կրթական գործընթացի անբողջականությունն ու ծրագրային չափանիշների շարունակականությունը,
- Բոլոնիայի համաձայնագրի պահանջներին համապատասխան իրականացնել ուսումնական ծրագրերի կազմումը կրեդիտային համակարգով: Ապահովել անցումը գիտելիքների և կոմպետենցիաների գնահատման բազմագործոնային համակարգին, ուսանողների մտավոր ու անձնային որակների կատարելագործմանը, առաջադիմության որակի բարձրացմանը,
- կրթական առարկայական ծրագրերի կատարելագործում և համապատասխանեցում դուբլինյան նկարագրիչներին,
- առարկայական փաթեթների ստեղծում,
- կրթական առարկայական ծրագրերի ստեղծման գործընթացի կատարելագործում,

- ինովացիոն կրթական ծրագրերի ներդրում,
- բուհում ներդրված կրթական ծրագրերի որակավորման բնութագրիչների ստեղծում՝ ըստ որակավորումը բնութագրող ունակություններին, հմտություններին ներկայացվող գնահատման պահանջների,
- համաձայն որակավորման բնութագրիչների՝ ճկուն ուսումնական պլանի ստեղծում,
- բակալավրի և մագիստրոսի հիմնական կրթական ծրագրերի բովանդակության համարում, ներդաշնակեցում, ավարտական որակավորման բնութագրիչների հստակեցում, մուտքի և ելքի պահանջների ճշտում,
- ուսումնական պլանների ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաների կրթամասերի բովանդակային փոփոխություններ՝ ելնելով աշխատաշուկայի ձեռներեցության, մարդասիրական, իրական գիտելիքների և մշակույթի զարգացման խնդիրներից,
- ուսումնական ծրագրերի, պլանների փորձագիտության կազմակերպում գործատուների շրջանում:

#### **Խնդիր 4. Ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ձևավորում**

Ելնելով մանկավարժական բուհին և նրա շրջանավարտին ներկայացվող ժամանակակից պահանջներից՝ ուսուցման համակարգը կողմնորոշել ուսանողների անձի զարգացմանը, ապագա ուսուցիչների մասնագիտական գործիմացության, գիտելիքների, ազգային և համազգային հոգևոր արժեքային համակարգի ձևավորման արդյունավետությանը:

Ուսուցման ուղղությունները.

- ուսումնական գործընթացի առաջին փուլերում ձևավորել ուսանողների՝ կրթության միջանկյալ և վերջնական նպատակների գիտակցման ընդունակություններ,
- զարգացնել ուսանողների մանկավարժական նորարարական գործունեության, կոլեկտիվ ինքնավարության ու ինքնազարգացման ստեղծագործական սուբյեկտներ լինելու կարողությունները,
- ուսուցման գործընթացը կառուցել այնպես, որ յուրաքանչյուր ուսանող կարողանա (դասախոսների և խորհրդատուների օգնությամբ) նախագծել անհատական զարգացման ծրագիր իր ընդունակություններին ու կարողություններին համապատասխան: Այդ գործընթացն ապահովելու համար ուսումնական պլաններում պարտադիր դասընթացներին զուգահեռ կազմակերպել ընտրովի և այլընտրանքային դասընթացներ՝ աստիճանաբար ավելացնելով վերջիններիս տեսակարար կշիռը,

- կրթության բովանդակության մեջ ներմուծել մանկավարժական նորարարության ու մենեջմենթի ծրագրային փաթեթներ,
- ուսուցումն իրականացնել պրոբլեմային, հետազոտական անհատական տարրերակված ուսուցման դիրակտիկական համակարգերի կիրառմամբ: Լայնորեն կիրառել պարապմունքների այնպիսի ձևեր, ինչպիսիք են ուսանողների ինքնուրույն աշխատանքների պաշտպանությունները, ընդունախոսությունները, գործունեության որոշակի իրավիճակների վերլուծությունը,
- նվազեցնել ուսանողների շաբաթական կոնտակտային ժամերի քանակն ինքնուրույն աշխատանքների ծավալի ավելացման հաշվին: Ստեղծել պայմաններ ուսանողների թիմային ստեղծագործական աշխատանքը կազմակերպելու և աջակցելու համար,
- բոլոր ուսանողներին ուսուցման վաղ փուլերից ներգրավել գիտահետազոտական, համաստեղծագործական գործունեության մեջ,
- կատարելագործել ուսումնական և մանկավարժական պրակտիկաների բովանդակությունն ու կառուցվածքը: Պրակտիկաների ընթացքում լուծել ոչ միայն մասնագիտական ու մանկավարժական գործունեության տարրեր հիմնահարցեր, այլև նորարարական գործունեության մեջ ընդգրկման համար երիտասարդ մասնագետներին անհրաժեշտ կարողությունների մշակման խնդիրներ: Պրակտիկաներն իրականացնել մասնագիտացված հիմնարկ-ձեռնարկություններում, բազային դպրոցներում և մանկավարժական փորձարարական լաբորատորիաներում ու կրթահամալիրներում:

## **Խնդիր 5. Որակի կառավարման և բարձրացման կատարելագործում**

Նախապատրաստել և իրականացնել ինստիտուտի կրթական ծրագրերի և դրանք կատարող ստորաբաժանումների գործնեության վերլուծության և որակի ներքին գնահատման գործընթաց՝ հիմքում ունենալով ուսանողների և աշխատաշուկայի կողմից երիտասարդ մասնագետների կրթական ու մասնագիտական պատրաստվածությանը ներկայացվող պահանջները: Որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսման որակի և արդյունավետության բարձրացման և միջազգային պահանջներին համապատասխանեցման միջոցառումներ:

Ուզմակարական ուղղությունները.

- որակի գնահատման հայեցակարգի բարեփոխում և կատարելագործում,

- որակի կառավարման կառուցվածքային կառույցի (Որակի մենեջմենթի կենտրոն) ստեղծում՝ միավոր-ստորաբաժանումների պարտականությունների և գործառույթների հստակ տարանջատմամբ,
- կրթության որակի գնահատման անընդհատ մոնիթորինգի կազմակերպում,
- կրթության որակի վարկանշային վերահսկման կատարելագործում (ուսանողի գիտելիքի, դասախոսի, ամբիոնի, ֆակուլտետի),
- կրթության որակի բարձրացման համակարգի դրույթների բարեփոխում և որակի ապահովման (վերահսկում ու գնահատում) կենտրոնի ստեղծում,
- դասախոսական անձնակազմի մասնագիտական որակի բարձրացման պլանների մշակում և ներդրում,
- ուսանողների գիտելիքների որակի ստուգման համակարգի կատարելագործում,
- ամբիոնների կողմից իրականացվող կրթական ծրագրերի և ամբիոնների գործունեության գնահատում և վերլուծություն,
- ուսանողների գիտելիքների գնահատման ընթացիկ և ամփոփիչ գնահատման (որակավորման) գործընթացների կատարելագործում,
- որակի գնահատման չափանիշների, գործընթացների թափանցիկության, իրապարակայնության և իրազեկման ապահովում (մամուլ, կայք),
- գիտելիքի գնահատման համակարգչային ծրագրի ներդրման բարելավում և առարկայացանկի ընդլայնում:

#### **Խնդիր 6. Կրթական գործընթացի որակի բարելավում**

Ուազմակարական ուղղությունները.

- պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացում,
- պրոֆեսորադասախոսական կազմի համալրման մեթոդների գործընթացների կատարելագործում,
- մասնագետների հաշվեկշռի պահպանման քաղաքականության հստակեցում՝ բարձրակարգ մասնագետների պատրաստման գործընթացի գերակայությամբ,
- ուսումնական գործընթացն ապահովող նյութատեխնիկական բազայի հարստացում և վերազինում՝ արդի տեխնոլոգիական պահանջներին համահուն,
- արտաքյուջեի հարստացման նոր միջոցների որոնում և նպատակառուղում կրթական գործընթացի բարելավմանը,
- դրամաշնորհներին, ծրագրերին ինտեգրվելու ճանապարհով ֆինանսական նոր միջոցների ձեռքբերում և նպատակառուղում դեպի կրթական գործընթաց,

- գործատուների հետ համագործակցություն, համատեղ ծրագրերի իրականացում,
- մարզային և պետական կառույցների օժանդակությամբ լսարանային ֆոնդի բարելավման խնդրի լուծում,
- կրթական գործընթացում տեղեկատվական-համագործակցային միջոցների ներդրման արդյունավետության բարձրացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով դասավանդվող և ուսումնաօժանդակ անձնակազմի պարբերական ուսուցման կազմակերպում,
- երիտասարդ դասավանդողների վարպետության բարձրացման մեթոդական սեմինարների կազմակերպում,
- գրադարանի ֆոնդի անընդհատ բարելավում,
- էլեկտրոնային գրադարանի ներքին ցանցի ստեղծում,
- ՎՊՄԻ-ի կրթական գործընթացների որակի գնահատման ամենամյա գեկույցի պատրաստում և հրապարակում,

## **Խնդիր 7. Ուսումնառության և դասավանդման որակների արդյունավետության բարձրացում**

Ուազմավարական ուղղությունները.

- կրթական գործընթացի կազմակերպման, վերահսկման բարեփոխում, կատարելագործում,
- ուսուցման նորարարական մոտեցումների մշակում և կիրառում,
- ինքնուրույն աշխատանքի բովանդակային կողմի հստակեցում, դասախոսների կողմից վերահսկման և դեկավարման գործիքների մշակում,
- գիտելիքի հաղորդման, ստուգման համակարգային համակարգի ընդլայնում,
- ուսուցման գործընթացում ուսանողների բավարարվածության հաշվառում, բավարարվածության աստիճանի բարձրացում,
- դասախոս-ուսանող համագործակցության զարգացում,
- դասավանդման արդյունավետության բարձրացում՝ հիմնված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, տեղեկատվական ռեսուրսների վրա,
- տեխնոլոգիապես հագեցած լսարանային ցանցի ընդլայնում:

## **3. Գիտահետազոտական գործունեություն**

### **Խնդիր 1. Մանկավարժական գիտության զարգացման խթանում**

Ուազմավարական ուղղությունները.

- բուհական և ակադեմիական գիտությունների համագործակցություն,

- հանրակրթության մանկավարժական ժամանակակից խնդիրներին նվիրված հետազոտությունների ակտիվացում,
- միջին մասնագիտական կրթության կազմակերպման, կառավարման խնդիրներին նվիրված հետազոտությունների ակտիվացում,
- մանկավարժության տեսության, կրթության և մանկավարժական մտքի պատմության, գործնական մանկավարժության, սոցիալական մանկավարժության ուղղություններով տարվող գիտահետազոտական ուսումնասիրությունների առաջնայնության ամրագրում,
- դասընթացների առարկայական մեթոդիկաների տեսության և պրակտիկայի խնդիրների ճշտում և դրվածքի բարեփոխում,
- ուսումնամեթոդական, գիտամեթոդական ձեռնարկների ստեղծում:

## **Խնդիր 2. Գիտահետազոտական գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում Ռազմավարական ուղղությունները.**

- գիտահետազոտական կենտրոնի ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության որակի բարձրացում, նպաստավոր պայմանների ստեղծում,
- գիտական աշխատանքների խրախուսման ներբուհական հիմնադրամի ստեղծում,
- գիտական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում,
- բուհի գիտական գործունեության ինտեգրում ակադեմիական համակարգիչ,
- երիտասարդ գիտական կայրերի աճը խթանող ծրագրերի մշակում,
- հետազոտությունների տպագրման աջակցություն,
- ուսումնահետազոտական լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի հարստացում, հնարավորությունների օգտագործման արդյունավետության բարձրացում:

## **Խնդիր 3. Մարզի գիտահետազոտական ուղղություններին ինտեգրում**

Ռազմավարական ուղղությունները.

- մարզին սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների գիտախորհրդատվական ծառայությունների մատուցում,
- հանրակրթական դպրոցների մանկավարժական անձնակազմի համար խորհրդատվական ծառայությունների կազմակերպում (ակադեմիական գիտություններ):

#### **4. ՎՊՄԻ միջազգային կապերի զարգացում**

**Խնդիր 1. ՎՊՄԻ-ի միջազգային կապերի զարգացում՝ Լռու մարզի տարածաշրջանային զարգացման ռազմավարության հաշվառմամբ:**

Ռազմավարական ուղղությունները.

- կապերի խորացում և ընդլայնում՝ տեղական իշխանությունների, ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների տարածաշրջանային գրասենյակների հետ՝ մարզի զարգացման ծրագրերում ընդգրկվելու, արդյունավետ աշխատանք կատարելու նպատակով,
- անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցության իրականացման համար:

**Խնդիր 2. ՎՊՄԻ-ի կարգավիճակի բարձրացում՝ հարավկովկասյան տարածաշրջանային մակարդակով կրթական ծառայությունների մատուցման բնագավառում:**

Ռազմավարական ուղղությունները

- արտասահմանյան գիտական դպրոցների առաջավոր գիտամեթոդական ձեռքբերումների ներդրում,
- կրթության որակի գործուն համակարգի ստեղծում և կիրառում,
- լեզվական կրթական ծրագրերի մշակում և ներդրում ուսանողների, դասախոսների ու աշխատակիցների համար՝ միջմշակութային հաղորդակցությունն ապահովելու նպատակով,
- օտար լեզուների դասավանդման որակի շեշտակի բարելավում, լեզուների ուսումնասիրման ժամանակակից ծրագրերի ներդրում ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և աշխատակիցների համար,
- ՎՊՄԻ-ում մշակված և կիրառվող կրթական ծրագրերի, գիտահետազոտական աշխատանքների գրախոսում և փորձաքննական գնահատում արտաքին (այդ թվում նաև այլ երկրների) մասնագետների կամ կազմակերպությունների կողմից,
- մասնակցություն հարավկովկասյան տարածաշրջանային ընդհանուր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերին:

**Խնդիր 3. ՎՊՄԻ-ի ուսումնական և գիտահետազոտական գործումներության արդյունքների մրցունակության բարձրացում:**

Ռազմավարական ուղղությունները.

- Անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում՝ ՎՊՄԻ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, երիտասարդ դասախոսների և աշխատակիցների գիտահետազոտական գործունեությունը խթանելու համար:
- Կայուն կապերի հաստատում ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ՝ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, միջազգային չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրեր մշակելու նպատակով:
- Համագործակցություն մարզային համապատասխան կառույցների հետ՝ մարզի տնտեսական, արդյունաբերական, սոցիալ-մշակութային ոլորտի զարգացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:
- Համագործակցություն հանրապետության այլ բուհերի հետ՝ գիտահետազոտական աշխատանքներ, դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նպատակով:

**Խնդիր 4. Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքների իրագործում՝ Եվրոպական ընդհանուր կրթական տարածքում ներգրավվելու նպատակով:**

Ուղղականացնելու համապատակով:

- Կայուն կապերի հաստատում Բոլոնյան գործընթացում ներգրավված արտասահմանյան նույն ուղղվածության բուհերի հետ,
- մասնակցություն կրթության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների տարածաշրջանային և ԱՊՀ շրջանակներում իրականացվող նախագծերին և հետազոտական աշխատանքներին,
- դասախոսների և ուսանողների շարժունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ նախապայմանների ստեղծում՝ նախանշված Բոլոնյան գործընթացով,
- համագործակցություն հանրապետության այլ բուհերի հետ՝ Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքների իրականացման, միջազգային գործունեության հայեցակարգերի մշակման և ներդրման գործում:

**Խնդիր 5. Հետադարձ կապերի ապահովում:**

Ուղղականացնելու համապատակով:

- կապերի ընդլայնում և խորացում գործատուների, մարզում և հանրապետության այլ շրջաններում աշխատող նախկին շրջանավարտների հետ՝ ինստիտուտի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով,
- ինստիտուտի՝ ներկայումս արտասահմանյան երկրներում բնակվող շրջանավարտների հետ համագործակցության համակարգի ձևավորում՝

համատեղ գիտակրթական, հետազոտական, միջնշակութային նախագծեր իրականացնելու նպատակով:

## ՎՊՄԻ-ի ստրատեգիական զարգացման հայեցակարգը 2010-2015 թթ. համար

### Նախագծի հիմնական դրույթները

«Դաստիրակությամբ համակցված կրթությունը պետության առաջնակարգ կարևորության խնդիրներից է, իսկ նրա ստրատեգիան պետք է մշակել հին չինական ասացվածքի էռթյանը համապատասխան՝ «Եթե պլանը կազմում ես մեկ տարվա համար՝ բրինձ աճեցրու, եթե քսան տարվա համար՝ ծառ տնկիր, եթե դարի համար՝ երեխաներին կրթիր»:

#### 5. Ֆինանսատնտեսական գործունեություն

Խնդիր 1. Բուհի ֆինանսական կայունության ապահովում և զարգացման նախագծանպատակային ֆինանսավորման համակարգի ձևավորում:

Ռազմավարական ուղղությունները.

- բուհի հիմնական գործունեությունից ստացված ֆինանսական ռեսուրսների, բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման աղբյուրների հնարավորությունների ընդլայնում ու արդյունավետ օգտագործում, ֆինանսական ռեսուրսների տնտեսում բոլոր ոլորտներում,
- բուհի ֆինանսավորման բազմադրյուր մեխանիզմների մշակում և հետագա ընդլայնում,
- ֆինանսական միջոցների բաշխման և օգտագործման ընթացակարգի մշակում ու կատարելագործում,
- բուհի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կառավարման նպատակով ֆինանսների պլանավորման, կանխատեսման, հաշվառման, վերլուծության և վերահսկման համակարգերի գործունեության կատարելագործում,
- ֆինանսների կառավարման ժամանակակից տեղեկատվական համակարգի ներդրում և կատարելագործում,
- բուհի ֆինանսական գործունեության ներքին նորմատիվային բազայի արդյունավետ մշակում և ներդրում (կանոնադիր կապիտալում փոփոխությունների իրականացում և համալրում, անհրաժեշտ ֆինանսական ծախսների վերահսկում):

Խնդիր 2. Աշխատանքի վարձատրության նոր խթանիչ համակարգի ներդրում ու կատարելագործում:

Ուզմավարական ուղղությունները.

- աշխատակիցների նյութական իրավիճակի բարելավում՝ կիրառելով աշխատանքի վարձատրության վարկանշային խթանիչ համակարգ,
- աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործում՝ ներդնելով նյութական խթանման տարբերակված քաղաքականության ժամանակակից միջոցառումներ,
- կադրերի որակավորման բարձրացման շահագրգռող համակարգի ձևավորում,
- բուհի նյութատեխնիկական և սոցիալական ոլորտների զարգացման նպատակով հայրենական և արտասահմանյան ներդրողների հետ համատեղ ներդրումային նոր նախագծերի մշակում և իրականացում:

**Խնդիր 3. Կրթական ու գիտական արտադրանքի իրացման մարքետինգային քաղաքականության մշակում և իրականացում:**

Ուզմավարական ուղղությունները.

- գիտահետազոտական աշխատանքների և կրթական ծառայությունների իրացման քաղաքականության խթանում՝ այն առավելագույնս հարմարեցնելով ժամանակակից աշխատաշուկայի առաջադրած պահանջներին,
- կրթական ծառայությունների շուկայում աշխատանքների ակտիվացում և անհրաժեշտ ծախսերի ծավալի վերահսկում,
- ինստիտուտի զարգացման նպատակային ծրագրերի և ներքին դրամաշնորհների համակարգի իրականացում (ներդրում),
- ինստիտուտի Ենթակառուցվածքներում (ֆակուլտետներում) ֆինանսատնտեսական մեխանիզմի զարգացում, նրանց ֆինանսական ինքնուրույնության ու պատասխանատվության բարձրացում:

## **6. Տնտեսական գործունեություն**

**Խնդիր 1. Բուհի արտադրատնտեսական և սոցիալական Ենթահամակարգերի զարգացում, հիմնական ֆոնդերի շարունակական համալրում:**

Ուզմավարական ուղղությունները.

- բուհի արտադրատնտեսական ծառայությունների և կառուցվածքային Ենթաբաժինների համագործակցության կատարելագործում,
- բուհի տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տնտեսական համակարգի կառավարման կառուցվածքի կատարելագործում,

- աշխատակիցների և ուսանողների աշխատանքի, կենցաղային ու հանգստի պայմանների կատարելագործման նպատակով ուսումնական մասնաշենքերի և հանրակացարանների նոր շինությունների շինարարության, վերանորոգման, վերականգնման աշխատանքների պլանավորում և իրականացում,
- տնտեսական համակարգի կողմից ուսումնագիտահետազոտական գործընթացի սպասարկման որակի բարձրացում,
- աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով տնտեսական ենթակառույցի աշխատակիցների աշխատանքի խթանման մեխանիզմների ներդրում:

## **Խնդիր 2. Ուսուրսների խնայողություն և ծախսերի կրճատում բոլոր ոլորտներում:**

Ուզմավարական ուղղությունները.

- ինստիտուտի հիմնական և շրջանառու ֆոնդերի պահպանման, անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հաշվառման և վերահսկման նպատակով նորմատիվային բազայի մշակում,
- բուհի բոլոր ենթակառույցներում ուսուրսախնայողության համակարգի մշակում և ներդրում,
- աշխատանքային անվտանգ պայմանների ապահովում:

## **7. Սոցիալական ոլորտ և նյութատեխնիկական բազա**

### **Խնդիր 1. Սոցիալական ոլորտի կատարելագործում**

Ուզմավարական ուղղությունները.

- սոցիալ-մշակութային կենտրոնի ստեղծում,
- աշխատակիցների և ուսանողների սոցիալական ապահովվածության ենթակառուցվածքների հետագա զարգացում,
- աշխատակիցների և ուսանողների նկատմամբ ցուցաբերվող սոցիալական աջակցության ճկուն համակարգի մշակում,
- աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանման համար պայմանների կատարելագործում,
- աշխատակիցների և ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովման միջոցառումների հատվածի ընդլայնում,
- ուսանողական հանրակացարանների համակարգի ստեղծում, այնտեղ ուսանողների բնակվելու կանոնակարգի մշակում և պայմանների շարունակական բարելավում,

- աշխատակիցների և ուսանողների աշխատանքային անվտանգ պայմանների պահպանման և սոցիալական ապահովության պահանջնունքների երաշխավորման միջոցառումների մշակում:

## **Խնդիր 2. Նութատեխնիկական բազայի և հիմնական ֆոնդերի ընդլայնում ու կատարելագործում**

Ուղղական ուղղությունները

- բյուջետային և արտաքյուջետային ֆինանսավորման աղբյուրների հաշվին բուհի նյութատեխնիկական բազայի զարգացման ու համալրման ֆոնդերի ձևավորման սկզբունքների մշակում,
- ինստիտուտի նյութատեխնիկական բազայի և հիմնական ֆոնդերի կատարելագործում՝ այն համապատասխանեցնելով ուսումնական գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների իրականացման անընդհատ փոփոխվող ժամանակակից պահանջնունքներին,
- ուսումնական գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների իրականացման ու հետագա զարգացման ապահովման համար սարքավորումների և ծախսվող նյութերի նկատմամբ առկա պահանջնունքների կանոնակարգման չափորոշիչների մշակում,
- նյութատեխնիկական բազայի ռացիոնալ, բազմապրոֆիլ օգտագործում՝ աշխատակիցների և ուսանողների մոտ ստեղծելով շահագրգովածության ու պատասխանատվության մթնոլորտ ուսումնական մասնաշենքների, սարքավորումների, նյութերի պահպանման և արդյունավետ օգտագործման համար,
- ուսումնական և գիտահետազոտական համատեղ նպատակներով լաբորատորիաների համակարգի օգտագործման կատարելագործում,
- ՀՀ գիտության և կրթության, արդյունաբերության և առևտուրի նախարարությունների համատեղ ծրագրային պահանջներին համապատասխան ներբուհական-արտադրական լաբորատորիաների ստեղծում:
- **ստեղծել ----- -ին նպաստող բարոյահոգեբանական խաղաղ մթնոլորտ,**
- **իրականացնել իրազեկման աշխատանքներ հասարակության, պրոֆեսորադասախոսական և ուսանողության մեջ,**
- **աստիճանաբար պակասեցնել և բացառել գիտելիքի ստուգման մեխանիզմների մեջ առկա անմիջական կոնտակտը:**